

ընկերակցութեամբ վաթսուն մարդկանց ու ձիաւորներու, անոնց ամենուն ինչքերոջն ու կազմածներոջն հանդերձ, երբ ինքն Անգլիոյ Տէրութեան Երկիրը գայ, եւ պարսպաւոր քաղաքներէ կամ ուրիշ տեղերէ անցնի, հոս մնայ եւ ասկից օտար աշխարհի կողմերն երթայ՝ որչափ որ նոյն Թագաւորին հաճոյ երեւնայ .

Պայմանաւ միայն՝ որ միշտ նոյն Թագաւորն եւ իրեն մարդիկը ցուցնեն վերոյիշեալ Ապահովագրոյն Արքունի Հրովարտակը նոյն Արքունական պարսպաւոր քաղաքաց պահապաններուն, երբ ներս մտնեն . ուստի ոչ ոք չիշեալ մարդիկներէն նենգաւոր եւ մատնիչ համարուի, ո՛չ ալ սոյն Թագաւորութեան Երկրէն դուրս հանուի, եւ ոչ ուրիշ մէկ մը Թագաւորին թշնամիներէն սեպուի :

Վկայ է Արքայն, առ Ուեսմինսթրի, 'ի 11 Դեկտեմբերի :

'Ի ձեռն Հաւտոսագրի՝ Մասնաւոր Կնիով :



ԺԶ

Լեւոնի վերադարձն ի Պարիս

Պատերազմին վերջ մը արուելու եւ երկու ազգերու միջեւ խաղաղութեան հաստատման համար իր կատարած միջնորդութեան տեղեկագիրը փութով ներկայացուց Լեւոն Կարսլոսի, Դովրի վրայէն Կալէ եւ անկէ ալ էկլիւզ անցնելով (1386 մայիս 15—20) :

Սաղաղութեան պայմաններու քննութեան համար նոր ժողով մը նշանակուած էր Լեյինգհէնի մէջ, որ կը գտնուի Կալէի եւ Բուլոյնի միջեւ : Անգլիայի Թագաւորն անձամբ ներկայ պիտի գտնուէր ժողովին եւ Ֆրանսայի Թագաւորին հետ « բերան ի բերան » պիտի խօսէր . բայց իր խոստումը չկատարեց, այլ իրեն տեղ Լանգաստերի եւ Գլոսեստերի գքսերը զրկեց : Ֆրանսայի Թագաւորն ալ իր կողմէ Բերրիի եւ Բուրգոնիի գքսերը զրկեց, ընկերակցութեամբ Հայոց Թագաւորին : « Հայաստանի Թագաւորը շատ կը ցանկար որ Ֆրանսայի եւ Անգլիայի միջեւ խաղաղութիւն հաստատուէր, յուսալով որ պիտի կրնար շուտով Թագաւորներէն օգնութիւն մը ձեռք բերել իր տէրութիւնը վերահաստատելու համար : Բայց վերջապէս գքսերն ու անոնց ընկերացող ուրիշ խորհրդականներն իրենց դաշնագրու-